NOVAL ՆՈՎԱԼ

«Նովալ» ՍՊԸ, ՀՀ, 0023, ք. Երևան, Իսահակյան փ. 18, հեռ. (+374 93) 39 77 60
էլ. փոստ՝ noval.llc.noval@gmail.com

№ _____24_____ «16» ____10_____ 2025 թ.

Երևանի քաղաքապետ
պարոն Տ.Ավինյանին

Հարգելի պարոն Ավինյան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվերով, «ՆՄԹ Արքիթեքչուր Ստուդիո» ՍՊԸ-ի կողմից, մշակվում է Ակադեմիական քաղաքի գլխավոր հատակագծի նախագիծը:

«Նովալ» ՍՊԸ-ն իրականացնում է «Ակադեմիական քաղաք» հայեցակարգային նախագծի գլխավոր հատակագծի ռազմավարական էկոլոգիական գնահատումը /ՌԷԳ/: Առաջնորդվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի 22-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 21 դեկտեմբերի 2023թ. «Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին» N 2294-Ն որոշման պահանջներով, խնդրում եմ տրամադրել, համայնքի դիրքորոշումն, առաջարկությունները, հնարավոր խնդիրներն ու սահմանափակումներն օտարվող տարածքի և հիմնադրույթային փաստաթղթի նախագծի վերաբերյալ:

Խնդրում եմ ներկայացնել նաև գլխավոր հատակագծի նախագծի հնարավոր կապը համայնքին վերաբերող հիմնադրույթային կամ ռազմավարական փաստաթղթերի հետ:

Առդիր՝ նախագծի բացատրագիրը և գլխավոր հատակագիծը:

Տնօրեն՝ _______________ Ա. Դռնոյան